Ուսուցման

Ուղեցույց

Ուսուցման

Ո ւ ղ ե ց ո ւ յ ց

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

© 1994, 1999, 2001 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Printed in Germany.

Անգլերեն տեքստի հաստատումը՝ 3/01
Թարգմանության հաստատումը՝ 3/01
Teaching Guidebook-ի թարգմանությունը
Armenian

Բովանդակություն

Ներածություն	1
Հոգեպես Պատրաստվեք	2
Ուսուցանեք Հիսուսի պես	4
Օգտագործեք Ուսուցման Բազմազան Մեթոդներ	9
Պատրաստեք Ձեր Դասը	13
Հասկացեք Նրանց, Ում Սովորեցնում եք	16
Ուսուցման Պարգևները	18
Ղեկավարել Ուսուցիչների Վերապատրաստումը Ճյուղում	19
Ավետարանային Դասընթացի Ուսուցանման Ծրագիր	21
Եկեղեցու Նյութեր Ձեռք Բերելը և Ընտանիքի Պատմության մեջ Տեղեկություններ Տեղադրելը	23

Բաշխում

Ուսուցման Ուղեցույցը օգտագործվում է հիմնական ուսումնական ծրագրի հետ միասին և օգտակար կլինի նաև ուսուցիչների և այլ անդամների համար միավորներում, որտեղ օգտագործում են ընդհանուր ուսումնական ծրագիրը (տես *Տեղեկություն Քահանայության և Օժանդակ Կազմակերպության Ղեկավարների համար* [36363 201]): Այս ուղեցույցը կարող է օգնել անդամներին բարելավելու ուսուցումը տանը և Եկեղեցու կազմակերպություններում: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա այս ուղեցույցի մեկ օրինակ: Ընտանիքի ղեկավարը նույնպես կարող է այն օգտակար գտնել:

Ներածություն

Սույն ուղեցույցը կազմված է ծնողների, առաջնորդների և ուսուցիչների համար: Այն կարող է օգտագործվել որպես անհատական ջանքի մի մաս, ուղղված որպես ուսուցիչ զարգանալուն: Այն կարող է օգտագործվել որպես Ավետարանային դասընթացի ուսուցման և ուսուցիչների որակավորման հավաքների հիմք (տես 21–22 էջերը):

Տերը սովորեցրել է.

«Եվ ես պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք սովորեցնեք մեկդ մյուսին թագավորության վարդապետությունը:

Սովորեցրեք ջանասիրաբար և իմ բարեհաճությունը կլինի ձեզ հետ, որ դուք ավելի կատարելապես հրահանգվեք տեսության, սկզբունքների, վարդապետության, Ավետարանի օրենքի և Աստծո թագավորությանը վերաբերող ամեն ինչի, ինչը նպատակահարմար է, որ հասկանք» (ՎևՈւ 88.77–78):

Տունը պետք է կենտրոնական վայրը լինի, որտեղ սա կկատարվի: Տան համար օգնություն է հանդիսանում Եկեղեցում սովորելն ու սովորեցնելը: Մենք բոլորս որպես ուսուցիչներ պատասխանատվություն ունենք մեր մերձավորների և առօրյա կյանքում հանդիպող ընկերների հանդեպ: Մենք ուսուցանում ենք որպես ծնողներ, որդիներ, դուստրեր, ամուսիններ, կանայք, եղբայրներ և քույրեր: Մենք ուսուցանում ենք որպես Եկեղեցու առաջնորդներ, դասարանի ուսուցիչներ, տնային և այցելող ուսուցիչներ: Մենք նաև ուսուցանում ենք որպես կոլեգաներ, հարևաններ և ընկերներ: Երբեմն սովորեցնում ենք մեր ասածներով և բերած վկայություններով, սակայն, ավելի հաճախ մենք սովորեցնում ենք օրինակով:

Գալիլեյան Ծովի ափին հարություն առած Տերը հրահանգում էր Պետրոսին. «Արածեցրու իմ ոչխարները» (Հովհաննես ԻԱ.16–17): Ուսուցանելու կոչը պահանջում է, որ մենք սնենք մյուսների հոգիները ավետարանի ճշմարտություններով և, այդպիսով, առաջնորդենք նրանց դեպի Փրկիչը (տես Մորոնի 6.4): Մտածեք Երկնային Հոր զավակների փրկության մեջ ավետարանի ուսուցման դերի մասին: Կարո՞ղ եք պատկերացնել ավելի ազնվական կամ սուրբ պարտականություն:

Եթե դուք ծնող եք կամ նոր կոչված ուսուցիչ, ապա կարող է դուք հատկապես մտահոգ լինեք այս պատասխանատվությամբ: Հիշեք, որ Տերը պատրաստ է օգնել ձեզ: Նա խոստացել է, որ եթե մենք խոնարհ ենք և հավատ ունենք, ապա Նա «թույլ բաները ուժեղ կդարձնի մեզ համար» (Եթեր 12.27): Մեր ջանքերում, ուղղված որպես ուսուցիչ կատարելագործվելուն, մենք կարող ենք հիմնվել կյանքում ձեռք բերած փորձերի ու հմտությունների վրա: Մեր ունակությունները կշատանան, եթե պատշաճորեն պատրաստվենք, փորձենք զորացնել նրանց, ում սովորեցնում ենք և հավատանք Տիրոջը:

Պատրաստվեք Հոգեպես

Երբ հոգեպես պատրաստվում եք, Սուրբ Հոգին կարողանում է ուսուցանելիս առաջնորդել և օգնել ձեզ: Սուրբ Հոգին անհրաժեշտ է ավետարանի սկզբունքներն ու ճշմարտությունները ուսուցանելու համար: Տերն ասել է. Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով, և եթե դուք չեք ստանում հոգին՝ դուք չպետք է սովորեցնեք (տես ՎԿՈՒ 42.14): Հետևյալ առաջարկությունները կօգնեն ձեզ ուսուցանել Սուրբ Հոգու միջոցով:

Հաստատված Եղեք

Երբ կանչվում եք ուսուցանելու, դուք պետք է հաստատվեք և հատուկ օրհնություն ստանաք քահանայության առաջնորդների կողմից: Այդ օրհնությունը կօգնի ձեզ իրականացնել ձեր պարտականությունները: Եթե ձեր ուժերի ներածին չափով ծառայեք ուսուցանելու ձեր կոչման մեջ, ապա Տերը կընդլայնի այլոց նկատմամբ ձեր բարի ազդեցության ներուժը: Նա նույնիսկ ձեր ուժերից վեր տաղանդներ և ունակություններ կշնորհի ձեզ անհրաժեշտության դեպքում:

Ձգտեք Ունենալ Սուրբ Հոգու Առաջնորդությունը

Ուսուցանելիս ձգտեք ունենալ Սուրբ Հոգու առաջնորդությունը: Նա կարող է օգնել ձեզ հասկանալ նրանց կարիքներն, ում սովորեցնում եք և դասը պատրաստել այնպես, որ հոգեհարազատ լինի դրանց: Նա կմեղմացնի ձեր սիրտը և կպատրաստի ձեր միտքը լրացուցիչ ոգեշնչում և առաջնորդություն ստանալուն:

Հաճախ Աղոթեք

Հաճախ աղոթեք և խնդրեք Տիրոջը օրհնել ձեզ սովորելիս և պատրաստվելիս: Երբեմն կարող եք ծոմ պահել աղոթքների հետ մեկտեղ: Աղոթեք հասկանալու և սիրելու համար այն անձանց, ում սովորեցնում եք: Սովորեք ճանաչել և հետևել Սուրբ Հոգու շշունջներին, որոնք կգան ձեզ:

Ուսումնասիրեք Սուրբ Գրությունները

Աղոթելով ուսումնասիրեք Սուրբ գրությունները: Այդպես վարվելով, դուք կսովորեք Փրկչի մասին և ճշմարտության մասին ձեր գիտելիքները կհարստանան: Սուրբ Հոգին կօգնի ձեզ հասկանալ Սուրբ գրությունները և դրանք դասարանի անդամների և ընտանիքի անդամների կարիքների դեպքում կիրառելու ձևերը: Եթե Սուրբ գրություններն ուսումնասիրելիս աղոթեք ու ծոմ պահեք, ապա Սուրբ Հոգին կառաջնորդի ու կզորացնի ձեզ ուսուցանելիս:

Ապրեք Համաձայն Ավետարանի

Ապրեք համաձայն ավետարանի ուսմունքների այնքան լիովին, որքան կարող եք: Ապաշխարեք կատարած մեղսագործությունները: Վարվելով այդպես դուք զորություն ու հասկացողություն կստանաք: Ըստ Ավետարանի ապրելու ձեր ձգտումներում ունեցած խաղաղության ու երջանկության զգացումները ակնհայտ կլինեն մյուսներին: Նրան կզգան ձեր վկայության անկեղծությունը և ձեր հանձնառության զորությունը: Նրանք կառաջնորդվեն ձեր կյանքի օրինակով:

Մի ուսուցիչ դժվար պահ էր ապրում դասը պատրաստելիս Սուրբ Հոգու առաջնորդությունը զգալու հետ կապված: Աղոթելով օգնության համար նա գիտակցեց, որ ներքուստ բարկացած է իր հարևանուհու վրա, որը շատ կոպիտ էր վարվել նրա հետ: Նա խոնարհաբար խնդրեց Տիրոջը ներել իրեն: Հաջորդ օրը նա այցելեց իր հարևանուհուն և ներողություն խնդրեց նրա հանդեպ



տածած վատ զգացումների համար: Նրանք մտերմացան և նա կարողացավ կրկին վայելել Սուրբ Հոգու առաջնորդությունը:

Խոնարհ Եղեք

Հեզությունը կօգնի ձեզ խուսափել միայն ձեր մասին մտածելու կամ չափից ավել ձեր սեփական գիտելիքների ու տաղանդների վրա ապավինելու գայթակղությունից: Դուք կարող եք հեզություն ցուցաբերել հետևելով Առակաց Գ.5–6 հատվածում տված խորհրդին. «Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր: Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, և նա կուղղէ քո ճանապարհները»: Տերը սովորեցրել է, որ խոնարհ լինենք և Տեր Աստվածը կառաջնորդի մեզ ձեռքից բռնած և կտա մեր աղոթքների պատասխանները (տես ՎԼՈ 112.10):

Ուսուցանեք Հիսուսի պես

Սիրեք Նրանց, Ում Ուսուցանում եք

Իր Երկրային կյանքի ընթացքում Հիսուսը մեծ սեր և ըմբռնում էր ցուցաբերում բոլոր մարդկանց նկատմամբ: Նա սովորեցրել է մեզ սիրել յուրաքանչյուրին և օգնել միմյանց: Նա ասել է. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհաննէս ԺԳ.34): Երբ մեր սերն ենք ցուցաբերում նրանց հանդեպ, ում ուսուցանում ենք, նրանք ավելի քաջատեղյակ են դառնում իրենց հավիտենական արժեքի մասին, ավելի խանդավառ՝ սովորելու և ավելի ընդունակ՝ Սուրբ Հոգուն լսելու:

Ավետարանի ուսուցիչ լինելն ավելին է նշանակում, քան յուրաքանչյուր շաբաթ մի դաս պատրաստելը: Դա նաև նշանակում է հոգ տանել դասարանի անդամների մասին: Ձանքեր թափեք նրանցից յուրաքանչյուրին անհատապես ճանաչելու ուղղությամբ: Դա կօգնի ձեզ ավելի արդյունավետ ուսուցանել: Նրանք ձեր օգնության կարիքը կունենան խնդիրների դեպքում, երբ չեն հաճախում կամ որևէ արատ ունեն: Հիշեք կորած ոչխարի մասին Փրկչի առակը (տես Ղուկաս ԺԵ.3–6):

Եկեղեցի հազվադեպ հաճախող մի երեխայի ուսուցիչը նկատել էր, որ երբ շաբաթվա ընթացքում զանգահարում էր երեխայի ծնողներին, ապա նա գալիք կիրակի օրը գալիս էր Եկեղեցի: Նա ջանք գործադրեց ավելի հաճախ խոսելու ծնողների հետ և նշելու իր մտերմությունը երեխայի հետ: Նա նույնիսկ դիմավորում էր երեխային դպրոցում, երբ ծնողներն աշխատում էին, որպեսզի նա բաց չթողնի դասարանային միջոցառումը:

Որպես ուսուցիչ դուք նույնպես կարող եք շատ բան անել ընկերակցելու համար անդամների հետ և օգնելու նրանց ապրել ըստ Ավետարանի: Սա հատկապես կարևոր է նոր անդամների դեպքում: Միշտ օգնեք նրանց զգալ, որ իրենց ուրախ են: Հարմարեցրեք նրանց համար, որ մասնակցեն դասարաններում: Պատրաստեք ձեզ Ավետարանի ճշմարտությունները սովորեցնելուն Հոգով ու սիրով:

Ուսուցանեք Ավետարանի ճշմարտությունները

Հիսուսը ուսուցանում էր Ավետարանի ճշմարտությունները: Նա հատկապես կանգ էր առնում Ավետարանի առաջնային սկզբունքների վրա՝ որոնք են հավատը, ապաշխարությունը, մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը: Նա ուսուցանում էր մեզ սիրել և ծառայել միմյանց: Նա սովորեցնում էր քահանայության, ուխտերի և արարողությունների մասին և բոլոր բաների մասին, որոնք մենք պետք է իմանանք և կատարենք դեպի Իրեն գալու համար: Մենք նույնպես պետք է սովորեցնենք Ավետարանը ինչպես բացահայտված է սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների խոսքերում: Աշխարհիկ առարկաները, սեփական կարծիքները և մտահայեցողական կամ վիճելի ուսմունքներն ընդունելի չեն:

Քրիստոսն ավետարանի սկզբունքները սովորեցնում էր պարզությամբ: Նա գործածում էր մաքուր, պարզ լեզու և առօրյա կյանքից պատմություններ ու օրինակներ: Նրա դասերը լի էին բազմաթիվ պարզ պատմություններով, որոնք հասկանալի էին բոլոր մարդկանց: Նա պատմում էր մոլորված ոչխարը գտնելու, մետաղադրամը փնտրելու և անառակ որդու վերադարձի կապակցությամբ ուրախանալու մասին (տես Ղուկաս 15):

Սովորեցնելիս նա հաճախ էր օգտագործում Սուրբ գրությունները: Ուսուցանելիս դասի ժամանակ աշխատեք հաճախ օգտագործել սուրբ գրությունները: Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, որ սուրբ գրություններում հիշատակվող մարդիկ իրոք ապրել են և Տիրոջը ծառայելու իրենց ջանքերում ունեցել են և փորձություններ, և ուրախություն: Այնպիսի հարցեր տվեք նրանց, ում ուսուցանում եք, որոնց պատասխանները հարկավոր է գտնել սուրբ գրություններում: Քաջալերեք անհատներին սուրբ գրությունները ուսումնասիրել նաև տանը և ցույց տվեք, թե ինչպես կարելի է դա արդյունավետ կերպով անել: Սովորեցրեք նրանց, թե ինչպես կարելի է օգտագործել սուրբ գրությունների ուսումնական օգնությունը: Հանձնարարություններ տվեք, որոնք պահանջում են դասարանի անդամներից ուսումնասիրել սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խոսքերը:

Ուսուցանեք Սուրբ Հոգով

Ուսուցիչներն ուսուցանելիս պետք է աշխատեն Տիրոջ Հոգին ունենալ իրենց հետ: Անձը կարող է սովորեցնել խոր ճշմարտություններ և դասարանի անդամները կարող են ներգրավվել թեժ քննարկումների մեջ, սակայն մինչ Հոգին ներկա չլինի այդ բաները հզոր ազդեցություն չեն կարող ունենալ հոգու վրա: Երբ Հոգին ներկա է բոլորն ամուր են իրենց սիրով դեպի Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը, իրենց սիրով միմյանց նկատմամբ և իրենց պարտավորությամբ ապրելու ըստ Ավետարանի: Հետևյալը որոշ գաղափարներ են, թե ինչպես Հոգու ներկայությունն ունենալ ուսուցանելիս.

- Սկսեք աղոթքով
- Ուսուցանեք Սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերից
- Բերեք ձեր վկայությունը
- Կիսվեք ձեր փորձով և խնդրեք մյուսներին նույնպես վարվել
- Օգտագործեք երաժշտություն (տես էջ 10):
- Ցույց տվեք ձեր սերը Տիրոջ և մյուսների հանդեպ:

Եթե դուք պատշաճ կերպով պատրաստված եք, ապա Սուրբ Հոգին կլուսավորի և կառաջնորդի ձեզ ուսուցանելիս: Հնարավոր է ոգեշնչում ստանաք նրանց վերաբերյալ, ում ուսուցանում եք, և թե ինչը պետք է շեշտել նրանց ուսուցանելիս: Հնարավոր է մտահղացումներ և զգացումներ ունենաք, թե ինչպես նրանց ամենա արդյունավետ ձևով ուսուցանել: Ձեր քրտնաջան աշխատանքը կհզորանա, եթե խոնարհաբար հնազանդվում եք Հոգու շշուկներին: Նրանց, ում ուսուցանում եք, կարող եք օգնել նույնպես ճանաչել Հոգու ազդեցությունը:

Քաջալերեք Քրտնաջան Սովորել

Տերն ասել է, որ իմաստության խոսքերը որոնենք լավագույն գրքերում, ուսում որոնենք՝ սովորելով և հավատով (տես ՎԿՈ 88.118): Յուրաքանչյուր անդամ պատասխանատու է ճշմարտության գիտելիքը ձեռք բերել իր սեփական ջանքերի շնորհիվ: Ուսուցչի պարտականությունն է արթնացնել մյուսների մեջ սովորելու, հասկանալու և ըստ Ավետարանի ապրելու ցանկությունը: Այս պարտականությունն իրագործելու համար դուք կարող եք կենտրոնանալ երեք գաղափարների շուրջ.

1. Աշխույժ դարձրեք և հետաքրքրություն առաջացրեք նրանց մեջ, ում ուսուցանում եք: Սա կատարելու բանալին անձամբ ձեր խանդավառությունն է

Ավետարանն ուսումնասիրելու հարցում: Երկրորդը՝ ձեր կողմից ուսուցման մեթոդների օգտագործումն է, որը դասերն ավելի պարզ, հետաքրքիր և հեշտ հիշվող է դարձնում (տես էջեր 9–12): Հետաքրքրություն առաջացնելը հատկապես կարևոր է դասի սկզբում: Դասը ծրագրելիս հիշեք Հոգին հրավիրելու եղանակները, յուրաքանչյուրի ուշադրությունը գրավելու հետաքրքիր սկիզբով և կենտրոնացնելու դասի ժամանակ ուսուցանվող վարդապետության կամ սկզբունքի վրա:

2. Քաջալերեք մասնակցություն: Ծրագրեք եղանակներ, թե ինչպես կարող է յուրաքանչյուրը մասնակցություն ցուցաբերի դասի ընթացքում: Կարող եք խնդրել որևէ մեկին կարդալ սուրբ գրություններից որևէ հատված կամ որևէ պատմություն պատմի: Կարող եք հրավիրել նրանց պատասխանելու հարցերին կամ ազատ քննարկել դասի նյութը: Կարող եք խնդրել մեկ կամ երկու հոգու մի երգ երգել կամ նվագել որևէ գործիքի վրա: Աղոթքով կարող եք ընտրել որևէ մեկի բերելու իր վկայությունը կամ կիսվելու դասի թեմային վերաբերող անձնական փորձով: Երբեմն կարևոր է նախօրոք խնդրել մասնակցության մասին, որպեսզի նրանք, ում խնդրում եք պատրաստ լինեն և հարմարավետ զգան իրենց մասնակցելիս:

   Մի ուսուցչի դասի հիմնական նպատակն էր Մորմոնի Գիրքը կարդալու կարևորությունը: Նա խնդրեց իր դասարանի երիտասարդներին մտածել մի հատված, որը փոխել է իրենց կյանքը: Այնուհետև նա խնդրեց երեք կամ չորս կամավորների կանգնել և կիսվել դասարանի հետ սուրբ գրության իրենց հատվածներով և պատմել, թե ինչպես են այդ հատվածները փոխել իրենց կյանքը: Երբ յուրաքանչյուրը կիսվեց Մորմոնի Գրքի զորության մասին իր բաղձալի զգացումներով դասարանի անդամների մոտ անկեղծ ցանկություն առաջացավ ամեն օր կարդալու սուրբ գրությունները և խորհելու դրանց շուրջ:

   Ոմանք դժկամությամբ են մասնակցում: Մի խնդրեք անձանց բարձրաձայն կարդալ կամ աղոթել, մինչև համոզված չլինեք, որ նրանք հարմար են զգում անել դա: Եթե կասկածում եք մասնակցելու առումով որևէ անձի հոժարակամության վրա, ապա ավելի լավ է խնդրեք կամավորներին, քան նրանց, ովքեր հնարավոր է դժկամությամբ կանեն դա: Աշակերտներից շատերն աստիճանաբար կսովորեն հարմար զգալ մասնակցելիս, տեսնելով, որ նրանք, ովքեր մասնակցում են, շրջապատված են հարգանքով ու պատվով:

3. Օգնեք նրանց կիրառել սովորածը: Դուք նաև պետք է օգնեք ունկնդիրներին կիրառեն այն, ինչ սովորեցվում է կյանքի տարբեր իրադրություններում: Դա կարելի է անել հանձնարարությունների միջոցով, որոնք կօգնեն դասարանի անդամներին դաս քաղել ուսուցանվող ճշմարտություններից: Հիշեք, որ Ավետարանային ուսուցանումը արժեք չունի, եթե այն չվերածվի ըստ Ավետարանի ապրելու:

Սովորելուն Նպաստող Մթնոլորտ Ստեղծեք

Ավետարանը սովորելու համար ամենաբարենպաստ միջավայրն այն է, որտեղ յուրաքանչյուր ներկա գտնվող անձը մտածում է խմբի մյուս անդամների ուսման մասին: Սովորելու ցանկությունն ուժեղանում է, երբ ուսուցիչներն ու աշակերտները սիրում են միմյանց և օգնում են միմյանց հասկանալ ու ապրել ըստ Ավետարանի: Երբ ունկնդիրների հետ միասին աշխատում եք ստեղծել սովորելուն նպաստող մթնոլորտ, ապա վիճելի հարցեր ամենայն հավանականությամբ չեն առաջանա: Դուք պետք է ձեր ուժերի սահմաններում ամեն ինչ անեք ստեղծելու համար նման մթնոլորտ և օգնելու համար ձեր ունկնդիրներին օժանդակել դրան:

Ահավասիկ մի քանի խորհուրդներ, թե ինչպես ստեղծել սովորելուն նպաստող մթնոլորտ.

- Ժամանակին մտեք դասարան, ունենալով ձեզ հետ բոլոր անհրաժեշտ ձեռնարկներն ու սարքավորումները
- Հավաստիացեք, որ դասասենյակը մաքուր է, կարգի բերված, հարմարավետ և ուշադրություն շեղող ոչինչ չկա
- Ժամանակին սկսեք և ժամանակին ավարտեք դասը
- Եթե հնարավոր է, ապա ողջունեք դասարանի անդամներին անհատապես
- Ձեր գործողությունները պետք է Հոգին հրավիրող լինեն և ակնածանք քաջալերող
- Սիրեք դասարանի անդամներին և օգնեք նրանց հարմարավետ զգալ մասնակցելիս
- Այնպիսի հարցեր տվեք, որոնք կօգնեն դասարանի անդամներին կենտրոնանալ առարկայի վրա
- Քաջալերեք դասարանի անդամներին միմյանց հարգանքով լսել և ըմբռնումով մոտենալ
- Մի թույլ տվեք այնպիսի խոսակցություններ, որոնք կարող են վնասել կամ թուլացնել վկայությունները կամ ինչ-որ ձևով վանեն Հոգին:

Նույնիսկ երբ ամեն ինչ արել եք սովորելուն նպաստող մթնոլորտ ստեղծելու համար, հնարավոր է դեռևս որոշ դժվարությունների հետ բախվել: Հետևյալ խորհուրդները կօգնեն ձեզ լուծել որոշ հաճախ հանդիպվող դժվարություններն ու խնդիրները.

- Եթե ապակենտրոնացում առաջացավ, ապա դադարեք խոսելը մինչև բոլորի ուշադրությունը վերականգնվի: Այնուհետև շարունակեք դասը

- Եթե որոշ աշակերտներ դասի ժամանակ խոսում են միմյանց հետ, ապա դասից հետո հանդիպեք նրանց հետ առանձին և հարցրեք, թե ինչպես կարող էիք դուք և իրենք ավելի լավացնել դասը
- Եթե ինչ-որ մեկը գերակշռում է դասարանային քննարկման ժամանակ, ապա ուղղեք հարցերը դասարանի մյուս անդամներին կամ բարյացկամորեն ասացեք, որ կցանկանայիք լսել նրանց կարծիքները, ովքեր դեռ չեն խոսել
- Եթե դասարանի անդամները մեկնաբանություններ են կատարում, որոնք քննարկումը հեռացնում են դասի թեմայից, ապա ընդունեք նրանց ասածները, սակայն վերադարձրեք քննարկումը դապի դասի թեման:

Շեղող վարքը կնվազի, եթե միջոցներ գտնեք, որոնց շնորհիվ խմբի յուրաքանչյուր անձն իրեն սիրված և ընդունված կզգա ու հաջող մասնակցություն կցուցաբերի:

Օգտագործեք Ուսուցման Բազմազան Մեթոդներ

Դասը հետաքրքիր դարձնելու և դասարանի անդամներին ավետարանի ճշմարտությունները սովորեցնելուն օգնելու համար շատ միջոցներ կան, որ կարելի է օգտագործել: Ահա որոշ առաջարկություններ:

Օգտագործեք Պատմություններ և Օրինակներ

Պատմություններն ու օրինակները գրավում են մարդկանց ուշադրությունը և ցույց են տալիս, թե ինչպես կիրառել Ավետարանի սկզբունքներն առօրյա կյանքում:

Ուսուցչական ձեռնարկում և Սուրբ գրություններում բազմաթիվ հրաշալի պատմություններ կան: Դասից առաջ սովորեք բոլոր պատմությունները, որ ծրագրել եք օգտագործել: Փորձեք պատմությունը Ձեր սեփական բառերով պատմել: Դասարանն ավելի ուշադիր կլսի, եթե պատմությունը Ձեր բառերով պատմեք, այլ ոչ թե՝ կարդաք: Փոքր երեխաները հաճույք են ստանում պատմությունը բեմականացնելուց:

Երեխաների դասարանի մի ուսուցչուհի իր դասը միշտ սկսում էր Սուրբ գրություններից վերցված որևէ պատմությամբ: Օրինակ, եթե դասը բարության մասին էր, նա պատմում էր բարի սամարացու պատմությունը: Երեխաները կարողանում էին իրենց մտքում պատկերացնել կողոպտված մարդուն և այն մարդկանց, որոնք հայացքները թեքում ու հեռանում էին: Նրանք հուզվել էին վիրավոր մարդուն հոգ տանող սամարացու բարությունից ու արժանապատվությունից: Երեխաներն անհամբեր սպասում էին այդ պատմություններին: Ուսուցչուհին սովորեց իր ձայնն ու արտահայտությունն օգտագործել դասարանի ուշադրությունը

գրավելու համար: Դասարանի անդամներն ավելի ընտելացան Սուրբ գրություններին և ավելի հետաքրքրվեցին դրանցով:

Օգտագործեք Նկարներ ու Առարկաներ

Փրկիչը սովորեցնելիս հաճախ պարզ առարկաներ էր օգտագործում: Նա ավետարանի սկզբունքները համեմատում էր ցորենի, ավազի, քարերի և այլ ծանոթ առարկաների հետ, որպեսզի օգներ մարդկանց հասկանալ իր սովորեցրածը: Օրինակ, նա համեմատում էր Աստծո Թագավորությունը շատ մեծ հարստության հետ, որ մարդը պետք է վաճառեր իր ողջ ունեցածը այն ձեռք բերելու համար (տես Մատթէոս ԺԳ.44):

Նայեք ձեր շուրջը: Ի՞նչ սովորական իրեր կարող եք օգտագործել, որպեսզի դասարանի անդամները ավելի լավ հասկանան ավետարանի սկզբունքները:

Ավետարանի սկզբունքները լուսաբանելու համար կարելի է պարզ գծանկարներ և նկարներ օգտագործել: Ավետարանային Արվեստի Հավաքածուից մի նկար ցույց տվեք, երբ Սուրբ գրություններից որևէ պատմություն եք պատմում: Պարզ նկարներ նկարեք գրատախտակի կամ թղթի կտորի վրա պատմությունն ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Մի ուսուցիչ դաս էր տալիս պատմելով Հիսուսի առակը ցորենի ու մոլախոտերի մասին: Դասարանի անդամները գյուղական վայրում էին ապրում, ուստի ուսուցիչը գիտեր, որ նրանք կհասկանային, որ ցորենի երիտասարդ ցողունները կարող են ոչնչանալ մոլախոտերը շատ վաղ հեռացնելիս: Նա ցորենի ցողուններից և մոլախոտերից մի փոքր փունջ պատրաստեց և այն ցուցադրեց դասի ընթացքում:

Մի այլ ուսուցիչ դասարանի անդամներին առաջարկեց մտածել մի այնպիսի առարկա, որը կարելի էր համեմատել ապաշխարության հետ: Դասարանի անդամներից մեկն ասաց, որ ապաշխարությունը նման է օճառի, այն մաքրում է մեզ մեղքերից:

Օգտագործեք Երաժշտություն

Երաժշտությունը գերազանց միջոց է Տիրոջ Հոգին դասարան հրավիրելու համար: Երաժշտությունն օգնում է մեզ արտահայտելու մեր զգացումները, որոնք միգուցե դժվար կլիներ արտահայտել բառերով:

Եկեղեցու օրհներգերը սովորեցնում են Ավետարանային շատ սկզբունքներ և կարող են օգտագործվել գրեթե յուրաքանչյուր դասի ժամանակ: Կարող եք խնդրել որևէ անհատի, խմբի, ընտանիքի կամ ողջ դասարանին դասին վերաբերող մի օրհներգ երգեն: Կարող եք նաև բարձրաձայն կարդալ օրհներգի բառերը, մինչդեռ նվագակցում են նախերգանքը: Տարբերակ է նաև օրհներգի ձայներիզը հնչեցնելը:

Մի ուսուցչուհի դաս էր պատրաստել ծառայության մասին: Նա ընտրել էր մի հիմն, որը համապատասխանում էր գլխավոր գաղափարին: Դասի ընթացքում խնդրել էր քույրերից մեկին կարդալ բառերը մինչ մեկ ուրիշը մեղմ մրմնջում էր երգի եղանակը: Նա դասարանի անդամներին առաջարկեց հանգիստ մտորել կարդացվող բառերի մասին դրանք կարդալու ընթացքում: Այդ երաժշտությունը դասարանի անդամներին օգնեց ավելի ուժեղ զգալ ծառայության կարևորությունը:

Մտածելու Տեղիք Տվող և Քննարկման Հանգեցնող Հարցեր Տվեք

Դասի ժամանակ ճիշտ հարցեր տալը կնպաստի մտածված սովորելուն և քննարկումներին: Հարցերն ու քննարկումներն օգտակար են շատ առումներով: Նրանք օգնում են դասարանի անդամներին ուշադիր լինեն դասի ընթացքում: Կարող եք նաև պարզել, թե արդյո՞ք դասարանի անդամները հասկացել են դասը: Դասարանի անդամները կարող են իրար սովորեցնել՝ հարցերին պատասխանելով և քննարկելով: Նրանք կարող են սովորել, թե ինչպես կիրառել ավետարանի սկզբունքներն իրենց կյանքում:

Դասը պատրաստելիս որոշեք, թե ի՞նչ հարցեր եք տալու: Հետևյալ առաջարկությունները կարող են ձեզ օգտակար լինել.

- Հարցեր տվեք, որոնք դասարանի անդամներին կօգնեն խորհել ավետարանի սկզբունքի և այն իրենց կյանքում կիրառելու մասին: Մտածելու տեղիք տվող հարցերը հաճախ սկսվում են այսպես՝ «ինչո՞ւ» կամ «ինչպե՞ս»: Խուսափեք այնպիսի հարցերից, որոնց կարելի է միայն «այո», «ոչ» կամ այլ որևէ մեկ բառով պատասխանել:

Այսպես օրինակ, մեր կյանքերը Փրկչի շուրջ կենտրոնացնելու մասին դասն ուսուցանելիս կարող եք տալ հետևյալ հարցերը.

«Ի՞նչ է նշանակում կառուցել Քրիստոսի քարի վրա»:

«Բացի Քրիստոսի քարից ի՞նչ հիմքերի վրա են երբեմն մարդիկ կառուցում իրենց կյանքերը»:

«Ինչպե՞ս եք դուք օրհնվել կառուցելով ձեր կյանքը Քրիստոսի քարի վրա»:

- Այնպիսի հարցեր տվեք, որոնք քաջալերում են դասարանի անդամներին կիսվել անձնական գաղափարներով ու փորձով, օրինակ.

  «Ինչու՞ է Տերը պատվիրել մեզ միշտ աղոթել»:

  «Ինչպե՞ս է Նա պատասխանել ձեր աղոթքներին»:

- Այնպիսի հարցեր տվեք, որոնք կօգնեն դասարանի անդամներին ավետարանի սկզբմունքները գործածել իրենց կյանքում, օրինակ.

  «Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ պատրաստել ինքներս մեզ մեր աղոթքների պատասխաններն ստանալուն»:

  «Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ Հիսուս Քրիստոսը աշխարհի Փրկիչն է»:

  «Ինչպե՞ս կարող եք զորացնել ձեր այն վկայությունը, որ Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարեն է»:

Երբ որևէ մեկի հարցին չեք կարող պատասխանել, ապա խնդրեք դասարանի անդամներին, որ օգնեն ձեզ կամ ասացեք հարց տվողին, որ կգտնեք հարցի պատասխանը և հաջորդ դասին կպատասխանեք:

Մի մտահոգվեք, եթե դասարանի անդամները մի քանի վայրկյան լուռ են մնում հարցը տալուց հետո: Թերևս, եթե թվում է, թե նրանք չեն հասկացել հարցը, ապա անհրաժեշտ է, որ այն ավելի պարզ ձևակերպեք: Որևէ մեկին հարց տալիս լավ կլինի, որ նախ՝ նրա անունը ասեք, այնուհետև՝ հարցը:

Վերջապես, ուշադիր եղեք, որպեսզի վաղաժամ չավարտեք լավ քննարկումը, նպատակ հետապնդելով ներկայացնել ամբողջ ձեր պատրաստած նյութը: Ամենակարևորն այն է, որ անդամները զգան Հոգու ազդեցությունը, ավելացնեն Ավետարանի մասին իրենց գիտելիքները, սովորեն կիրառել Ավետարանի սկզբունքներն իրենց կյանքում և ամրացնեն ըստ Ավետարանի ապրելու իրենց պարտավորությունը:

Հատուկ Հյուրեր Հրավիրեք

Երեցների քվորումի մի նախագահ հրավիրել էր մի այլ անդամի գալու և պատմելու երեցներին, թե ինչպես իրենց տնային ուսուցման ուղերձներն ավելի հետաքրքիր դարձնեն այցելվող երեխաների համար: Երեցները ոչ միայն հասկացան, թե ինչու՞ է հարկավոր, որ երեխաները մասնակցեն տնային ուսուցման ժամերին, այլ նաև շատ խորհուրդներ ստացան այն մասին, թե ինչպես օգնել երեխաներին անել դա:

Միջոցառումներ Կազմակերպեք

Դասին վերաբերող հասարակ միջոցառումները կարող են օգնել դասարանի անդամներին, հատկապես երեխաներին և երիտասարդներին, սովորել Ավետարանի սկզբունքները: Այդպիսի միջոցառումները պետք է ընդունելի լինեն Ավետարանը սովորելու համար: Եկեղեցու կողմից հրատարակված շատ ուսումնական ձեռնարկներում կան միջոցառումների առաջարկներ:

Կազմակերպեք Դասը



Շատ կարևոր է, որ դասերը կազմակերպեք այնպես, որ կարողանաք ամենաարդյունավետ կերպով ներկայացնել ավետարանի սկզբունքները: Հետևյալ առաջարկությունները կօգնեն ձեզ պատրաստվել:

Որոնեք Աղբյուրները

Եկեղեցին հոգատարությամբ պատրաստել է ընդունված ուսումնական ծրագրին վերաբերող նյութեր, որոնք հիմնված են Սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների ուսմունքների վրա: Հարցրեք քահանայության կամ օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին, թե արդյո՞ք կարող եք ձեռք բերել հետևյալ աղբյուրները և օգտագործեք.

- Եկեղեցու կողմից հրատարակված ուսուցչի ձեռնարկը՝ ձեր դասարանի համար:
- Սուրբ գրությունների մեկական օրինակ դասարանի յուրաքանչյուր անդամի համար:
- Վերջին օրերի մարգարեների ուսմունքները պարունակող եկեղեցական ամսագրերը:
- Ձեր լեզվով մատչելի Սուրբ գրությունների ուսումնասիրության համար օժանդակ նյութեր:

- Ավետարանային Արվեստի Հավաքածու կոչված նկարների հավաքածուն, որը պետք է լինի ձեր հավաքատան գրադարանում:

Ուսումնասիրեք առկա նյութերն այնպես, որ կարողանաք ծրագրել դրանք ձեր դասերում օգտագործելը: Նյութերը բարդացնել պետք չէ արդյունավետ ուսուցանելու համար: Քրիստոսը սովորեցնում էր շատ համեստ պայմաններում: Ձեր ուսուցանության կարևորագույն գործոնը Հոգու ազդեցությունն է: Ուսումնական աղբյուրների ճիշտ օգտագործումը Հոգու առաջնորդությամբ ամենահրաշալի հնարավորությունն է ստեղծում Ավետարանն ուսումնասիրելու համար:

Սկսեք Վաղ Պատրաստվելով

Դասերը վաղ պատրաստեք: Հաճախ օգտակար է սկսել դասերն ուսումնասիրելը դրանք դասավանդելուց մի քանի շաբաթ առաջ: Դա ժամանակ է ընձեռում դասի նյութերի մասին մտածելու, աղոթելու և պատշաճորեն պատրաստվելու:

Կենտրոնացեք Դասի Նպատակի վրա

Ձեր սովորեցնելիք յուրաքանչյուր դասն ունի նպատակ: Օրինակ, ծոմապահության դասի նպատակը՝ դասարանի անդամներին ծոմապահության օրհնությունների և ծոմապահության կիրակի օրը հատուկ նպատակով ծոմ պահելու կարևորությունը սովորեցնելն է:

Դասի նպատակը որոշելու համար ուսումնասիրեք դասի նյութը և առաջարկվող սուրբ գրությունները: Օգնություն խնդրեք Տիրոջից հասկանալու համար դասի ամենակարևոր ուղերձները այն անձանց համար, ում դասավանդում եք: Հարցրեք ինքներս ձեզ. «Ի՞նչ պետք է տեղի ունենա այս դասի արդյուքում այն անձանց կյանքում, ում սովորեցնում եմ»: Եկեղեցու հրատարակած ուսումնական ձեռնարկներից շատերում դասերն ընդգրկում են նպատակի մասին հաղորդագրություն: Այդ հաղորդագրությունները կօգնեն ձեզ հասկանալ, թե յուրաքանչյուր դաս ինչպես պետք է ազդի նրանց վրա, ում այն ուսուցանում եք:

Որոշեք, թե Ի՞նչ Սովորեցնել

Դասի նպատակը սահմանելուց հետո որոշեք, թե ինչ սկզբունքներ պետք է ուսուցանվի այդ նպատակն իրականացնելու համար: Ձեռնարկներից շատերը պարունակում են սուրբ գրություններ, պատմվածքներ և այլ տեղեկություն օգնելու համար ձեզ ներկայացնել դասը: Սակայն հաճախ դասը պարունակում է ավելի շատ նյութ, քան դուք կհասցնեք ներկայացնել ձեզ տրամադրված ժամանակի ընթացքում: Այսպիսի դեպքերում դուք պետք է ընտրեք այն նյութը, որն ամենաօգտակարը կլինի նրանց համար, ում ուսուցանում եք: Հարցրեք ինքներս ձեզ. «Դասում նշված վարդապետություններից ու սկզբունքներից որո՞նք կօգնեն դասարանի անդամներին հաղթահարել իրենց հանդիպող դժվարությունները»:

Եթե ձեռնարկներից ու սուրբ գրություններից զատ նյութերի կարիք ունեք, ապա օգտագործեք Առաջին Նախագահության և Այցելող ուսուցիչների ուղերձների պատմվածքներն ու ճառերը, Եկեղեցու ամսագրերը, հատկապես ընդհանուր կոնֆերանսի ուղերձները:

Որոշելով ուսուցանելու նյութը.

- Աղոթքով ուսումնասիրեք դասի բովանդակությունը.
- Կազմեք դասում ներկայացվող հիմնական վարդապետությունների ու սկզբունքների ցուցակը.
- Միշտ մտքում հիշեք ձեր ուսանողների կարիքներն ու հիմնախնդիրները.
- Հետևեք Հոգու առաջնորդությանը:

Ամենալավ միջոցը՝ մեկ-երկու հիմնական սկզբունքների վրա կենտրոնանալն է:

Որոշեք, թե Ինչպե՞ս Սովորեցնել

Երբ որոշել եք, թե ինչ սովորեցնել, դուք պետք է որոշեք, թե ինչպես անել դա: Ուսումնասիրեք նյութը և աղոթքով խորհեք, թե ինչպես ամենալավ կերպով ներկայացնել այն ուսանողներին: Ձեր օգտագործելիք մեթոդը պետք է օգնի ուսանողներին հասկանալ և կիրառել ձեր սովորեցրածը:

Մանրամասն ուսումնասիրեք սուրբ գրությունները, պատմվածքները և դասում քննարկվող այլ տեղեկատվությունը, որոնք կօգնեն ձեզ ուսուցանել վարդապետությունը կամ սկզբունքը: Պատրաստվեք դասարանի անդամներին օգնելու հասկանալ, թե ինչպես է պետք կիրառել սուրբ գրություններն իրենց կյանքում (տես Նեփի 19.23):

Կարող եք նաև ձեր կյանքից կամ դասարանի անդամների կյանքից պատմություններ և օրինակներ օգտագործել: Օրինակ, մի պատանի դադարել էր ծխելը Իմաստության Խոսքին նվիրված քահանայության մի դասից հետո, որի ժամանակ ուսուցիչը նկարագրել էր, թե ինչպես էր հաղթահարել այդ սովորությունը իր սեփական եղբայրը: Այս օրինակը ցույց է տալիս, որ ծխողը կարող է դադարել իր այդ սովորությունը: Երբ դասարանի անդամը լսեց այդ պատմությունը, նա վճռեց, որ կարող է փոխել իր սեփական կյանքը:

Դասը ներկայացնելու վերաբերյալ ուսումնական մեթոդների մասին տեղեկությունը կարող եք գտնել սույն ուղեցույցի 9–12 էջերում:

Ծրագրեք Ամփոփումը

Փրկիչը հաճախ ամփոփում էր իր սովորեցրածը և քաջալերում են մարդկանց կիրառել դա իրենց կյանքում (տես Բարի Սամարացու առակը, Ղուկաս Ժ.30–37): Դասի վերջում պետք է վերանայեք և ամփոփեք այն, ինչ ուսուցանվել է: Դասարանի անդամներին Ավետարանի վարդապետությունները կամ սկզբունքները կիրառելու եղանակներ առաջարկեք և խնդրեք նրանց ևս եղանակներ առաջարկել: Քաջալերեք նրանց օգտագործեն այդ գաղափարներից որոշները գալիք շաբաթվա ընթացքում: Հետագա դասերի ժամանակ կարող եք հարցնել նրանց, թե ինչ դասեր են քաղել այդ ջանքերի շնորհիվ:

Ուսուցչուհիներից մեկն իր դասարանի անդամներին առաջարկեց ողջ շաբաթվա ընթացքում անանուն մի ծառայություն մատուցել որևէ մեկին: Հաջորդ դասի սկզբում, ուսուցչուհին խնդրեց նրանց կարճ զեկուցել: Դասարանի անդամներից մի քանիսը եռանդուն փոխանակում էին իրենց փորձն ու ուրախությունը, որ զգացել էին դասը կյանքում իրագործելիս: Նրանց այսպիսի պահվածքը մյուսներին մղեց ավելի մեծ ծառայություններ մատուցել մարդկանց:

Հասկացեք Ձեր Ուսանողներին

Շատ կարևոր է հասկանալ նրանց, ում ուսուցանում եք: Հաշվի առեք ձեր դասարանի անդամների հասունությունն ու ունեցած փորձը: Տարբեր տարիքի մարդկանց կարիքներն ու սովորելու ընդունակությունը տարբեր են:

Երեխաներ

Երեխաներն աճում են մարմնապես, հոգեպես, հուզականորեն և հանրայնորեն: Դասը պատրաստելիս հիշեք յուրաքանչյուր երեխայի տաղանդները, կարողություններն ու կարիքները:

Երեխաները սիրում են բազմազանություն: Պատմվածքներ, պարզ խաղեր, նկարներ, առարկայական դասեր և երգեր օգտագործեք նրանց հետաքրքրելու համար:

Երեխաները նոր են սովորում բարությունն ու համբերությունը: Փորձեք լուծել այդ բնագավառներում եղած խնդիրները նրանց հիշեցնելով Հիսուսի օրինակը և հորդորելով հետևել նրան:

Երեխաները վստահող ու հավատացող են: Նրանք կհավատան ձեր սովորեցրածին: Նրանք նաև ձեր օրինակին կհետևեն:

Երիտասարդներ

Մանկության և հասունության միջև ընկած շրջանը երբեմն դժվար ու հախուռն է: Դասարանի անդամները կարող են բազմաթիվ պարտականություններ ունենալ ընտանիքում, դպրոցում և աշխատանքում: Հետևյալ առաջարկությունները կարող են օգնել ձեզ երիտասարդների վրա դրական ազդեցություն ունենալ.

Դասերը պատրաստեք նրանց կյանքին ուղղակիորեն համապատասխան: Օգնեք



նրանց իմանալու, թե ինչպես կարող է ավետարանը պատասխանել իրենց հարցերին և օգնել լավ ընտրություններ կատարել:

Երիտասարդները կարող են իրենց միայնակ կամ չգնահատված զգալ: Օգնեք յուրաքանչյուրին դասարանում իրեն կարևոր զգալ: Ավետարանի չափանիշներով ապրող խմբին պատկանելը երիտասարդներին հոգևոր ուժ է տալիս և օգնում է, որ իրենց կյանքը մաքուր ապրեն:

Ցույց տվեք, որ հարգում եք նրանց կարծիքները: Քաջալերեք նրանց մասնակցել դասին և քննարկել իրենց գաղափարները ձեր և միմյանց հետ:

Մեծահասակներ

Մեծահասակ դասարանի անդամները տարբեր տարիքի են և ունեն տարբեր հմտություններ ու կենսափորձ: Օգտագործեք այդ բազմազանությունը դասարանը հարստացնելու համար: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց փորձի արդյունքում ձեռք բերած իմաստությամբ: Օգտագործեք նրանց ունեցած բազմաթիվ տաղանդները:

Պարզությամբ սովորեցրեք ավետարանի ճշմարտությունները: Սուրբ Հոգին կօգնի դասարանի անդամներին հասկանալ և իրենց անձնական կյանքում կիրառել այդ ճշմարտությունները:

Ուսուցանելու Պարգևները



Որպես ուսուցիչ, դուք կվայելեք այն ուրախությունը, որն առաջանում է մարդկանց Ավետարանի մասին գիտելիքներ տալուց: Ավետարանը սովորեցնելու ձեր քրտնաջան ու հավատարիմ աշխատանքը կօգնի մյուսներին զորացնել Փրկչի մասին իրենց վկայությունները և ապրել պատվիրանները պահելով:

Կիրակնօրյա Դպրոցի մի ուսուցիչ մտահոգվել էր, որ ուսուցանելու համար դասարանում իրենից ավելի որակավորվածները կային: Նա մտածում էր, որ իր ուսուցանությունը ոչ մի արդյունք չի ունենա: Մի կիրակի օր դասարանի անդամներից մեկը մոտեցավ ուսուցչին: Նա ասաց, որ իր ամուսինն այնքան զգացված է եղել դասարանում Հոգու ազդեցությունից, որ վճռել է ամեն օր ընտանիքը հավաքի ընտանեկան աղոթք ասելու նպատակով: Նա նաև ծրագրել է պատրաստվել տաճար մտնելուն և այնտեղ ընտանիքը միասին կնքել: Դասարանի այդ անդամն իր սերն ու խոր գնահատությունն արտահայտեց ուսուցչին Սուրբ Հոգին դասարան հրավիրելու իր բոլոր ջանքերի համար: Այնուհետև, ուսուցչի սիրտը լցվեց հեզությամբ և նա հասկացավ ուսուցանելու ճշմարիտ նպատակն ու պարգևները:

Սովորեցնելով դուք և ձեր ունկնդիրները օրհնված կլինեք: Ավետարանի մասին ձեր սեփական գիտելիքը և Փրկչի մասին ձեր վկայությունը կամրանան, երբ դուք ուսումնասիրում, պատրաստվում և սովորեցնում եք Ավետարանի դասերը: Դուք ավելի մեծ սեր կզգաք մյուսների նկատմամբ: Դուք ավելի շատ կզգաք Հոգու դրսևորումները ձեր կյանքում, երբ խոնարհաբար ու ջանասիրաբար կաշխատեք ապրել ըստ ձեր սովորեցրածի: Ձեր կյանքը կհարստանա որպես ուսուցիչ ձեր ծառայությամբ:

Ղեկավարել Ուսուցիչների Վերապատրաստումը Ճյուղում

Ճյուղի նախագահությունը պատասխանատվություն է կրում ճյուղում ուսուցման որակի համար:

Ուսուցիչների Վերապատրաստման Կոորդինատորի Պարտավորությունները

Երբ ճյուղի անդամների թիվը աճում է, ճյուղի նախագահության անդամը կանչում է և ձեռնադրում է ուսուցիչների վերապատրաստման կոորդինատորի, որպեսզի հսկի ուսուցիչների վերապատրաստման գործը: Կոորդինատորը կարող է լինել եղբայր կամ քույր: Նա պետք է լինի ճյուղի խորհրդի անդամ և ծառայի որպես աջակցող միջոց քահանայության օժանդակ կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև ուսուցիչների համար, գործադրելով իր ջանքերը ավետարանի ուսուցումը բարելավելու գործում: Կոորդինատորը օգնում է ծրագրել և վարել ուսուցչի վերապատրաստման ժողովները և, եթե նշանակված է, ուսուցանել Ավետարանի Ուսուցման դասընթացը:

Ղեկավարների Աջակցությունը Ուսուցիչներին

Քահանայության և Օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց կազմակերպություններում ավետարանի ուսուցման որակի համար: Նրանք ուսուցման օրինակ են ծառայում և օգնում են ուսուցիչներին հասկանալ իրենց կոչումների կարևորությունը: Նրանք հայտնում են իրենց երախտագիտությունը, աջակցում և խրախուսում են ուսուցիչներին, ում ծառայում են:

Ուսուցման որակը Եկեղեցում կբարելավվի, երբ ղեկավարները հոգացող աջակցություն ցուցաբերեն և խրախուսեն իրենց կազմակերպությունների ուսուցիչներին:

Ուսուցիչների Վերապատրաստման Ժողովներ

Քահանայության կամ Օժանդակ կազմակերպության յուրաքանչյուր ղեկավար և ուսուցիչ պետք է հաճախի ուսուցիչների վերապատրաստման ժողովներին երեք ամիսը մեկ անգամ, որ սովորելի սկզբունքներ, մեթոդներ, և հմտություններ ավետարանի ուսուցումը բարելավելու նպատակով: Ուսուցիչների վերապատրաստման կոորդինատորը պլանավորում է ուսուցիչների վերապատրաստման ժողովները՝ խորհրդակցելով քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների հետ: Ժողովները պետք է անցկացվեն ուսուցիչների և ղեկավարների համար հարմար ժամանակ, և լինի այնպես, որ չխանգարեն Կիրակնօրյա դպրոցի ժողովներին: Ընդհանրապես ժողովները չպետք է տևեն մեկ ժամից ավելի:

Ուսուցիչների վերապատրաստման ժողովները կարող են ընդգրկել.

- Ճյուղի նախագահության անդամի, քահանայության կամ օժանդակ կազմակերպության ղեկավարի կողմից համառոտ ուղերձ՝ ուսուցման որևէ սկզբունքի վերաբերյալ:
- Քահանայության կամ օժանդակ կազմակերպության ղեկավարի կամ ուսուցչի կողմից ելույթ՝ ուսուցման որևէ մեթոդի կամ հմտության վերաբերյալ:
- Ժանամակ, որպեսզի ուսուցիչները և ղեկավարները կիվեն իրենց մտքերով և քննարկում ծավալեն դասարանի որոշ անդամներին օգնելու եղանակների շուրջ:

Երբ ուսուցիչների և ղեկավարների թիվն աճում է ճյուղում, ուսուցիչների վերապատրաստման ժողովները կարելի է անցկացնել ամեն քառորդ.

- 18 տարեկան և բարձր անդամների ուսուցիչների և ղեկավարների համար:
- 12 և 17 տարեկան անդամների ուսուցիչների և ղեկավարների համար:
- Երեխաների Միության ուսուցիչների և ղեկավարների համար:

Կարելի է այնպես կազմակերպել, որ այս յուրաքանչյուր ժողովն անցկացվի ամեն ամիս:

Ավետարանի Դասընթացի Ուսուցումը

Ավետարանի դասընթացի ուսուցումը դնում է հիմքը, որն օգնում է անդամներին դառնալ ավետարանի ավելի լավ ուսուցիչներ իրենց տանը և Եկեղեցու ժողովներում: Այս դասի ծրագիրը տրված է այս ուղեցույցի 21–22 էջերում: Ուսուցչի վերապատրաստման կոորդինատորը ուսուցանում է դասընթացը, քանի դեռ ճյուղի նախագահությունը չի կանչել մեկ այլ ճյուղի անդամի՝ ուսուցանելու այն:

Ճյուղի նախագահությունը հրավիրում է անդամներին՝ հաճախել դասընթացին: Ընդհանրապես, պետք է դասընթացին հաճախեն 10 անդամներից ոչ ավել, որ յուրաքանչյուրը դասին մասնակցելու հնարավորություն ունենա:

Ավետարանն Ուսուցանելու Դասընթացի Ծրագիր

Ավետարանն ուսուցանելու դասընթացը Եկեղեցու անդամների համար ավելի լավ ուսուցիչներ դառնալ սովորելու հնարավորություն է ընձեռում: Դասընթացի հրահանգիչը ուսուցիչների որակավորման բարձրացման կոորդինատորն է կամ եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի կողմից կոչված մի այլ փորձառու ուսուցիչ: Այս դասընթացը կարող է տեղի ունենալ Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ կամ մի այլ հարմար ժամի: Եթե դասընթացը վարվում է մի որոշակի կազմակերպության առաջնորդների և ուսուցիչների համար, ապա այն կարող է անցկացվել որպես նրանց առաջնորդության հերթական հավաքի մի մաս: Այնտեղ, որտեղ հեռավորության կամ առկա պայմանների պատճառով Կիրակնօրյա Դպրոցի ժամերին դասընթացն անցկացնելը անհնարին է, ապա տնային ուսուցման և մի քանի դասարանային հանդիպումների ժամանակ պետք է անցկացնել:

Սույն ուղեցույցում գաղափարներ կան յուրաքանչյուր դասի համար: Դաս պատրաստելիս հրահանգիչը պետք է օգտագործի «Օգտագործեք ուսուցման բազմազան մեթոդներ» բաժնում տրված առաջարկությունները: Յուրաքանչյուր դասից հետո հրահանգիչը պետք է կոչ անի դասարանի անդամներին թե Եկեղեցու դասարանում, և թե ընտանեկան երեկոյի ժամանակ սովորածը իրագործել: Սա մեծապես կնպաստի նրանց՝ որպես ուսուցիչներ զարգացմանը: Բացի դրանից, դասընթացը նախատեսված է ութ շաբաթվա համար, համաձայն հետևյալ ծրագրի: Ստորև տրված առաջարկությունները դասընթացի ուսուցչի համար են:

Առաջին շաբաթ

Դասարանի բոլոր անդամներին տվեք ուղեցույցի մեկական օրինակ և ուսումնասիրեք այն: Դասը կենտրոնացրեք ներածության և «Հոգեպես պատրաստվեք» բաժնի վրա: Շեշտեք ձեռնադրվելու և ըստ Ավետարանի ապրելու կարևորությունը Հոգին մեզ հետ ունենալու համար:

Երկրորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Սիրեք ձեր ուսանողներին» ենթաբաժնի վրա, որը գտնվում է «Ուսուցանեք Հիսուսի պես» բաժնում: Դիմեք նաև սույն ուղեցույցի 16–17 էջերին զետեղված տարիքային խմբերի առանձնահատկություններին: Խնդրեք դասարանի անդամներին պատմել իրենց փորձից, թե ինչպես ընտանիքի կամ դասարանի անդամներին սիրով օգտակար լինելը դրական արդյունք է ունեցել: Հնարավոր է ցանկանաք քննարկել, թե ինչպես կարող են ուսուցիչները օգտակար լինել և հոգ տանել յուրաքանչյուր անդամի համար՝ համաձայն նրա կարիքների, հատկապես, նորադարձների և արատներ ունեցող անդամների համար:

Երրորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Ուսուցանեք Հիսուսի պես» բաժնում գտնվող «Ուսուցանեք Ավետարանի ճշմարտությունները» ենթաբաժնի վրա: Նշեք վարդապետությունը հավատով լի, պարզ և հստակ ուսուցանելու կարևորությունը, ուսուցանելիս սուրբ գրություններ օգտագործելով և հիմնելով անձնական Ավետարանի ուսումնասիրության ծրագիր:

Չորրորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Ուսուցանեք Հիսուսի պես» բաժնում գտնվող «Ուսուցանեք Սուրբ Հոգով» ենթաբաժնի վրա: Օգնեք դասարանի անդամներին համոզմունք ունենան, որ կարող են Հոգին ունենալ իրենց ուսուցանության մեջ: Օգնեք նրանց ճանաչել և հետևել Հոգուն:

Հինգերորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Ուսուցանեք Հիսուսի պես» բաժնում գտնվող «Քաջալերեք քրտնաջան սովորել» ենթաբաժնի վրա: Նշեք հատուկ այն միջոցները, թե ինչպես կարող են ուսուցիչներն օգնել իրենց ուսանողներին ընդունել Ավետարանը սովորելու և լիովին ըստ դրա ապրելու իրենց պարտականությունը:

Վեցերորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Ուսուցանեք Հիսուսի պես» բաժնում գտնվող «Սովորելուն նպաստող մթնոլորտ ստեղծեք» ենթաբաժնի վրա: Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, թե ինչպես ստեղծել սովորելուն նպաստող մթնոլորտ, ուր յուրաքանչյուրը մասնակցություն է ցուցաբերում և ցանկանում է սովորել:

Յոթերորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Օգտագործեք ուսուցման բազմազան մեթոդներ» բաժնի վրա: Արդյունավետ դաս անցկացնելը պահանջում է մտահղացում ու ստեղծարարություն և այս բաժնի նյութը կարող է չափազանց օգտակար լինել: Խնդրեք դասարանի անդամներին ցուցադրել կամ կիսվել բաժնում քննարկվող ուսուցման մեթոդների վերաբերյալ իրենց փորձով:

Ութերորդ շաբաթ

Դասը կենտրոնացրեք «Պատրաստեք ձեր դասը» բաժնի վրա: Օգնեք դասարանի անդամներին հասկանալ դասի պատրաստությունը վաղ սկսելու կարևորությունը և քննարկեք, թե ինչպես ծրագրել և ներկայացնել արդյունավետ դասեր:

Դասընթացի ընթացքում հարմար պահի ժամանակ կարող եք ուշադրություն հրավիրել «Ուսուցանելու պարգևները» բաժնի վրա: Խնդրեք դասարանի անդամներին կիսվել իրենց փորձով, թե ինչպես են իրենց կյանքերն օրհնվել ուսուցիչների շնորհիվ և թե որպես ուսուցիչներ ինչպես ես իրենք կարողացել օգնել մյուսներին:

Երբ դասընթացն ավարտվի քաջալերեք ունկնդիրներին շարունակել որպես ուսուցիչներ: Եթե նրանք դասարանի նոր կոչված ուսուցիչներ են, ապա իրենց քահանայության կամ օժանդակ կազմակերպության առաջնորդը պետք է հանդիպի նրանց հետ և հակիրճ պատմի դասարանի և անդամների մասին: Այնուհետև, նրանք պետք է ժամանակ առ ժամանակ իրենց քահանայության կամ օժանդակ կազմակերպության առաջնորդին զեկուցեն իրենց առաջընթացի մասին և քննարկեն հատուկ դժվարություններն ու կարիքները: Նրանք նույնպես կարող են հրավիրել առաջնորդին այցելել իրենց դասարանը և օգնել ինչ-որ կերպ: Ուսուցչի որակավորման հրահանգիչը օժանդակ միջոց է բոլոր ուսուցիչների համար՝ և նրանց, ովքեր դասարաններում են ուսուցանում, և նրանց, ովքեր ուսուցանում են իրենց ընտանիքներում:

Եկեղեցու Նյութեր Ձեռք Բերելը և Ընտանիքի Պատմության մեջ Տեղեկություններ Տեղադրելը

Տեղական ղեկավարները և մյուս անդամները կարող են ձեռք բերել Եկեղեցու նյութերy, ներառյալ սուրբ գրություններ, ուսումնառության դասընթացներ, Եկեղեցու ամսագրեր, տաճարային երգ-նազգեստ, տաճարային հագուստ, իրենց Եկեղեցու բաշխման կենտրոնից կամ ծառայության կենտրոնից, Սոլթ Լեյքի Բաշխման Կենտրոնից, կամ Եկեղեցու պաշտոնական Ինտերնետային էջից, որի հասցեն է. www.lds.org.

Ընտանիք պատմության համար տեղեկությունը մատչելի է Եկեղեցու Ընտանիքի պատմության Ինտերնետայի էջից, որի հասցեն է. www.familysearch.org.

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02345 95201 1
34595 201